



«Նմանակի որ ժակրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՄՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿ
ԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

**Հետազոտության թեման՝ Ընտանեկան
հոգեբանություն: Կոնֆլիկտներ**

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Տաթևիկ Գոռյան

**Ուսումնական հաստատություն՝ Կաթնաղբյուրի
Մ.Գալշոյանի անվան միջնակարգ դպրոց**

Երևան 2022

Նպատակ`

- 1.բացատրել ընտանիք բառի կազմությունը,
- 2.ցույց տալ,որ այն մի մեծ հաստատություն է,
- 3.որ այն ամեն մի պետության հիմքն է,
- 4.վեր հանել ընտանեկան կոնֆլիկտները,
- 5.ցույց տալ նրա բացասական հետևանքները,
- 6.ինչու է հայ ազգը կարևորում ընտանիքի ստեղծումն ու ամրությունը,
- 7.հայ ընտանիքների արժեհամակարգի պահպանումն ու փոխանցելիությունը,որպես գոյապահպանման

ԸՆՏԱՆԻՔԻ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ:ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանիք բառն ինքնին խոսում է իր բառակազմության մասին`մեկ տանիքի տակ ապրողներ:

Ընտանիքը իրենից ներկայացնում է մի մեծ հաստատություն,որը արարվել է հազարամյակներ շարունակ:Ընտանիքի ձևավորումը երկարատև զարգացման արդյունք է.պատմականորեն ձևավորված ցեղերի և ցեղային միությունների ընդհանրության ընթացքում,որոնք կոչվել են էթնոսներ`ցեղ,ժողովուրդ,ազգ:

Ընտանիքը ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված մարդկանց խումբ է,որի անդամները միմյանց հետ կապված են ընդհանրական կենցաղով,փոխադարձ օգնությամբ,բարոյական պատասխանատվությամբ:

Հայերի մեջ ընտանիքը դիտվել է որպես հիմնարար,առանցքային արժեք:Ընտանիքի վրա է խարխիվում հասարակական

փոխհարաբերությունների ողջ համակարգը:Ընտանիքում է,որ մարդն ստանում է հասարակական կյանք մտնելու իր ողջ նախապատրաստական շրջանը:Դաստիարակության շնորհիվ,երեխան,մինչև գիտակից դառնալը,հասարակական կյանքի սովորություններին ու նորմերին ծանոթանում է ընտանիքում:

Դեռ վաղ մանկության հասակում,երեխան կարողանում է տարբերակում անել լավի-վատի,թացի-չորի,հարազատի-օտարի,իմ ու քոնի և այլնի մասին:

Ընտանիքում մանուկ երեխան յուրացնում է հասարակություն մտնելու նորմերը:

Տեղին է մեջ բերել հայկական ասացվածքը`հզոր ընտանիք-հզոր հասարակություն-հզոր պետություն:

Աշխարհում հայկական ընտանիքները եղել են խորհրդանիշ:Ահա թե ինչու օտարները միշտ ձգտել են քայքայել մեր ընտանիքները,տարբեր ձևերով:Որպես օրինակ կարելի է բերել բազմասերիանոց օտարածին,անբարո ֆիլմերի ցուցադրումը,որոնց նպատակը հայկական ընտանիքների քայքայումն է:

Իր գոյության ընթացքում ընտանիքը դարձավ որպես սոցիալական երևույթ:

Տարբեր տնտեսական ֆորմացիաներում,ընտանիքը փոխվում է,բայց պահպանում է իր հարաբերական ինքնուրույնությունը:

Ընտանիքը լինելով որպես սոցիալական միավոր,ըստ մեկնաբանությունների,այն առաջացել է նոր քարի դարի վեջում:Այդ ընթացքում քայքայվում էին տոհմատիրական կարգերը և առաջանում էր մասնավոր սեփականությունը,դասակարգերը և այլն:

Մեր հայկական ավանդական ընտանիքները ունեցել են գլոբալ առանցքային արժեք:Մեր հայոց պատմությունն ու իրականությունն է հավաստում,որ ավանդական հայկական հասարակությունում անհնար էր պատկերացնել որևէ մեկին ով ապրեր մենակ ,առանց

**ընտանիքի:Դրանք միայն ճգնաժամներ էին:Մենք`
հայերս,ավանդականորեն ապրել ենք մեծ ընտանիքներով:Այդ
ընտանիքները անվանվել է **գերդաստան**:Դա այնպիսի մի ընտանիք
էր,որ համատեղ մեկ տանիքի տակ ապրում էին ընտանիքի
մեծերը`իրենց տղաների,հարսների ու թոռների հետ:Ընտանիքի
մեծին`ավագին,անվանում էին տանտեր կամ **նահապետ**:Իսկ
տանտիրոջ կնոջն անվանում էին տանտիկին,տանտիրուհի ,մեծ
տիկին:Նրանք էին գերդաստանի գլխավորները:Այսօրվա ընկալմամբ
եթե մեկնաբանենք,ապա դա թվում է անսովոր,անհավանական:Բայց
դրա մեջ դրական շատ բան կար:Յեռանալով ավանդական
ընտանիքներից,կորցրեցինք և կորցնում ենք ազգային շատ
արժեքներ:Երբ ինչ որ ազգերի կողմից ծրագրավորված,թուրքի ու քրդի
ձեռքով,աշխարհի թատերաբեմից ուզեցին ջնջել հայ տարրը`19-20-րդ
դարերում,հայերիս թվաքանակը շատ-շատ պակասեց:ԵՎ ահա նման
պարագայում հայ առաքելական եկեղեցու և ժողովրդի ջանքերով զարկ
տվեց բազում ընտանիքների ձևավորմանը,որի արդյունքում հայ ազգը
շատացավ թվապես:Յիշում եմ պապիս,տատիս պատմածները,որոնք
ասում էին,որ իրենց ծնողները և իրենց սերունդը եկան լրացնելու այն
բացը,որ տրվեց հայ ազգին`ի նկատի ունեին Մեծ Եղեռնը,արված
թուրքերի կողմից-աշխարհի թողտվությամբ:**

**Ազգային ընտանեկան հոգեբանության աստվածային վառ
օրինակ,ինչպիսին մեր պապերի վարքն ու բարքն էր դժվար թե
լինի:Մեր նախնիները ,մեր պապերը լրացրին այն,ինչ ի վերուստ,թե
նախախնամությամբ պատեց մեր ազգին:**

**Յայկական ընտանիքներում անդամների թիվը նույնիսկ հասել է 50-
ի,անգամ 100-ի,որոնք ապրել են մեկ հարկի տակ`գերդաստան:Որպես
հավելում ասեմ,որ**

**որքան կուզենայի,որ ժամանակակից հայ ընտանիքները փոքր ի շատե
նմանվեին ավանդականին:Մեր մտահորիզոնից վանենք սոցիալական
պատճառները,քաղքենիությունը,նախանձելով ուրիշներին,ինչ-որ տեղ
ել նմանվելով նրանց,վերցնենք դրականը,վանենք բացասականը:Եթե
ժամանակակից ընտանիքների անդամները,անտեսելով**

դժվարությունները, ապրեն նույն հարկի տակ՝ զգալով իրենց քույրեր և եղբայրներ, ապա մենք կուենանք հզոր ընտանիքներ, հետևաբար և հզոր պետություն: Պատահական չէ՛, որ մեր նախնիները ընտանիք ասելով հասկացել են մի մեծ հզոր տուն: ԵՎ երբ ուզեցել են իմանալ, թե ում զավակն է, հարցրել են՝ ում տանից ես: Մենք հայերս մեր երկիրը կոչել ենք Հայոց տուն:

Տեղին է մեջբերել մեր աշխարհաճանաչ, հերոսապատումներով լի, բարին սերմանող, չարը՝ դատապարտող, ընտանիքը՝ վեր դասող Էպոսը, որում հաճախ հանդիպում ենք Սասնա տուն արտահայտությանը: Մեր Էպոսն ըստ Էության հայկական մի հզոր ընտանիք է, իր հզոր անհատներով:

Այն հանգամանքը, որ Հայաստան լեռնաշխարհը մի մեծ ընտանիք է, դա բխում է մեր ընդհանուր նախնուց՝ Հայկ նահապետից ծագելու գաղափարից:

Բայց քանի որ ընտանիքներում բնակվողներս սովորական մահկանացուներ ենք,

հետևաբար ունենք և՛ մեղք ենք գործում, լինում են կոնֆլիկտներ և այլ:

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքի հոգեբանություն, **հոգեբանությունն** բաժին է, որն ուսումնասիրելով **էվոլյուցիան** ու բնույթը ամուսնության և ընտանեկան հարաբերությունների, նրանց առաջացման յուրահատկությունները, ձևավորումը, կայունացումն ու քայքայումը, նկարագրելով ընտանեկան և ամուսնական հատկանիշների, **ընտանիքի** անդամների սոցիալ-հոգեբանական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները միմյանց հետ:

1960-1970-ական թվականներին՝ ամուսնությունն ու ընտանիքը հետազոտությունների առարկա դարձան մասնագետների, այդ թվում նաև հոգեբանների կողմից: Սկզբում ընտանիքը ուսումնասիրվել է

հոգեկան հիվանդությունների հետ կապված կանխարգելումը կամ ընտանիքի դաստիարակության թերությունները: Ավելի ուշ, ընտանիքի հոգեբանության տեսողական դաշտում աչքի ընկան այնպիսի գիտության բնագավառներ ինչպիսիք են՝ պատմությունը և էվոլյուցիայի ամուսնության ձևը, ընտանեկան կյանքի ցիկլը, ամուսինների փոխհարաբերությունները, ծնողների և երեխաների փոխհարաբերությունները, ընտանիքի և հասարակության փոխհարաբերությունները և այլն:

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ինչպես հայտնի է ժամանակակից գրականությունից ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիները հասկանան, որ ամուսնությունը ոչ թե ընտանեկան երջանկությունն ընտրելու ավարտն է, այլ նրա սկիզբը: Յուրաքանչյուր երիտասարդ մինչ ամուսնանալը պետք է տեղեկացվի, թե ինչին կարող է նա բախվել ամուսնական կյանքի ընթացքում: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերացումները պետք է լինեն համատեղ, որպեսզի ամուսիններից յուրաքանչյուրի վարքը չհակադրվի մյուսի պատկերացումներին: Չուզանքների դերերը և՛ կնոջից, և՛ ամուսնուց պահանջում են ընտանիքում տնտեսումը, երեխաների հանդեպ պատասխանատվությունը: Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնության կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները: Շատ էական է համարվում ընտանիքում անդամների միջև աֆեկտիվ կապերը: Միջանձնային հարաբերությունները սուբյեկտների փոխադարձ պատրաստակամությունն է որոշակի փոխգործողությունների տիպին: Հուզական կայունությունը պայմանավորված է ամուսինների զգացմունքներով (սեր, համակրանք, հարգանք): Որպես կանոն, երեխաները ծնողների գործերը և առօրյան դարձնում են ավելի հաճելի: Ծնողների վերաբերմունքն իրենց երեխաների նկատմամբ շատ դեպքերում տարբեր է: Այժմ երեխաներով շատ ընտանիքներում կարելի է տեսնել, որ մեծերին հարգում են, իսկ փոքր երեխաներին երես են

տալիս: Միջին տարիքի երեխաներին, որոնց մոռանում են, հիմնականում ավելի լավ մարդիկ են դառնում:

Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության՝ բնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրության պահանջմունքով: Դեռևս Արիստոտելն է նշել. ‘Ընտանիքը հասարակության բջիջն է’: Այսինքն՝ հասարակությունը, հետևաբար նաև պետությունը, կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Իսկ երբ է ընտանիքը առողջ: Ընտանիքի հոգեբանության մասնագետները գտնում են, որ հոգեբանորեն առողջ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են, թե՛ ամուսինների, թե՛ ծնողների ու երեխաների միջև: Այսինքն՝ առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյա-հոգեբանական մթնոլորտ:

Ամուսնությունը հենված է դրդապատճառների համակարգի վրա: Դրդապատճառները հենված են գիտակցության աստիճանի վրա և իրականացնում են անձի կյանքի կարևոր հարաբերությունները աշխարհի նկատմամբ, կազմում են մարդկային պահանջմունքների հիերարխիայի հիմքը: Ընտանիքի հոգեթերապիայի մասնագետ Յենրի Դիքսը դասակարգել է ամուսնության հետևյալ դրդապատճառները.

- **Սերը**
- **Մշտական սեքսուալ զուգընկեր ունենալու ցանկությունը**
- **Հոգեբանական պատճառները**

■ **Երեխա ունենալու ցանկությունը**

■ **Կենցաղային խնդիրների լուծումը**

■ **Ստեղծված հանգամանքները:**

Շատ մասնագետներ փորձել են պարզել, թե ինչ է սերը: 'Միայն սիրո միջոցով և սիրո գիտակցության միջոցով է մարդը մարդ դառնում', - ասել է Ֆ.Շլեգելը: Սերը մեր իսկական մարդկային բնույթի մի մասն է, այն հզորագույն զգացմունքներից մեկն է հույզերի ոլորտում, եթե ոչ ամենահզորը: Սերը խորը կապվածություն է երկու մարդկանց միջև: Սերը հաճախ շփոթում է սիրահարվածության հետ: Հասուն սերը զգայական հակման, մարդկային ջերմության և ուրիշի հետ ինտիմ մտերմության հոգեկան անհրաժեշտության օրգանական միասնությունն է: Սիրահարվածն ապրում է ուժեղ և վառ զգացմունք, բայց այն կենտրոնացված է գլխավորապես իր և իր ապրումների վրա, նա պահանջկոտ է, անզիջում և եզոխտ: Իսկ հասուն սիրո մեջ ծանրության կենտրոնը տեղափոխվում է զուգընկերոջ վրա: Մարդը նախ և առաջ մտահոգվում է նրա մասին, ում սիրում է, նրա հետաքրքրությունների, բարօրության, երջանկության և ինքնաարտահայտման մասին` ողջ ուժերով նպաստելով վերջիններիս իրականացմանը: Ուրիշ մարդու մասին մտածելու ունակությունը, տալով` ուրախություն ապրելու ունակությունը հասուն սիրո պարտադիր ուղեկիցներն են:

Սերը քաղց է ինչ-որ մեկի հանդեպ, մարմնի և հոգու ամենասուր քաղցը: 'Սիրել` նշանակում է հաճույք ապրել, երբ տեսնում ես, շոշափում, զգում բոլոր զգայարաններով այն էակին, որին սիրում ես', - ասել է Ստենդալը: Սերը կառույց է մեր բոլոր խորքային պահանջմունքների և զգայությունների վրա: Դա մարդկային ուժերի ամենասեղմ,

ամենախտացված միաձուլումն է՝ մարմնական և հոգևոր, գիտակցական և ենթագիտակցական ուժերի:

Սիրո ամենաբարձրագույն թռիչքը, նրա ամենապայծառ դրսևորումը հոգիների միաձուլումն է: Հոգու գաղտնարաններում առաջանում է ցավ ուրիշ մարդու համար այպես, ինչպես կցավես ու կանհանգստանաս ինքդ քեզ համար: Սերն ուշադրություն է, բարության, համբերություն, քնքշություն, երախտագիտություն, հարգանք և նվիրվածություն: Նա, ով սիրում է, ընդունում է իր սիրելիի հրապուրանքները, որպես իր սեփականները: Նա ընդունում է ուրիշին այնպես, ինչպիսին նա կա և հավատում է նրան: Նա, ով սիրում է, ունակ է զիջելու և ներելու: Ներումը իսկական սիրո ակտ է: Խիստ տարբեր է տղամարդու և կնոջ վերաբերմունքը սիրո նկատմամբ: Կինը հանճարեղ է իր սիրո մեջ, նրա վերաբերմունքը սիրո նկատմամբ ունիվերսալ է. նա սիրո մեջ ներդնում է իր բնույթի ամբողջ լիարժեքությունը: Իսկ տղամարդն ավելի շուտ տաղանդավոր է սիրո մեջ, քան հանճարեղ: Նա իրեն ամբողջությամբ չի դնում սիրո մեջ և ամբողջությամբ կախված չէ այդ սիրուց: Կնոջ սիրո պահանջներն այնքան անսահման են, որ երբեք չեն կարող բավալարարվել տղամարդու կողմից: Սերը դրականորեն է ազդում ընտանեկան հարաբերությունների բնույթի վրա այն ժամանակ, երբ զուգընկերները փոխադարձաբար կիսում են միմյանց դիրքորոշումներն իրենց համար կարևոր երևույթների, իրադարձությունների և արարքների հանդեպ: Ինչպես նշել է Սենտ-էքզյուպերին. ‘Իսկական սերը միմյանց աչքերին նայելու մեջ չէ, այլ՝ միասին նույն ուղղությամբ նայելու մեջ’: Ամուսնական կյանքի հաջողության վրա ազդում է ամուսինների համատեղելիությունը բոլոր ոլորտներում, երբ մարդիկ ոչ միայն համատեղվում են, այլև լրացնում մեկը մյուսին: Սոցիալ-հոգեբանական համատեղելիությունը ենթադրում է որոշակի ընդհանրություն, որը կարելի է դիտարկել երեք մակարդակներում.

1. Բարձրագույն և առավել բարձր մակարդակը արժեքակողմնորոշիչ միասնությունն է՝ կենսական արժեքների, ձգտումների, իդեալների,

հետաքրքրությունների, համոզմունքների միասնությունը, ինչպես նաև աշխարհայացքային միասնությունը:

2. Ֆունկցիոնալ-դերային սպասումների համաձայնեցվածությունը մարդկանց՝ իրենց դերերի և ֆունկցիաների մասին պատկերացումների համաձայնեցվածությունն էտվյալ միության մեջ:

3. Մարդկանց անհատական-հոգեբանական բնութագրերի համատեղելիությունը:

Չետաքրքիր է, որ բարեհաջող զույգերը, որոնք ունեն կայուն և առավելագույնս համատեղելի հարաբերություններ, տարբերվում են հակառակ խառնվածքով. դյուրագրգիռ խուլերիկը և հանգիստ ֆլեգմատիկը, ինչպես նաև մելանխոլիկը և կենսուրախ սանգվինիկը կարծես լրացնում են իրար: Եվ հակառակը երկու խուլերիկներից կազմված ընտանիքին կարող է սպասվել բարձր կոնֆլիկտայնություն ամուսինների պոռթկունության և անզսպության պատճառով: Պարզվում է՝ առավել ունիվերսալ զուգընկերներ են համարվում ֆլեգմատիկները, քանի որ նրանք հարմարվում են խառնվածքի ցանկացած տիպի հետ, բացի սեփականից: Չկա այնպիսի ամուսնական զույգ, որտեղ ամուսինները լիովին նման լինեն միմյանց: Սակայն պետք է նկատի ունենալ, որ համատեղ կյանքն աստիճանաբար հարթում է կտրուկ տարբերությունները ամուսինների հետաքրքրությունների, նախասիրությունների, հայացքների միջև, և առաջանում է գնահատականների ու վերաբերմունքի ընդհանրություն: Եթե տարբերությունները շատ են, պետք է հաբերել ու նաև ձգտել ավելի լավ հասկանալ ամուսնուն: Երբ ամուսիններն իրար լավ են հասկանում, նրանց բնավորության կամ խառնվածքի, վարքագծի խութերն ուժեղ չեն բախվում և խանգարում միմյանց: Երբ ամուսիններն անգամ իդեալական միասնության դեպքում հանդուրժում են միմյանց ինքնությունն ու անկախությունը, ապա զբաղմունքների տարբերությունը, բնավորությունների զանազանությունը չեն կարող տևական անջատման շարժառիթ ծառայել:

Եվ ընդհանրապես ամուսնության սկզբում կյանքը զարմանալիորեն հեշտ և ուրախալի է թվում, գրեթե իդեալական: Ի վերջո ռոմանտիկ հիացումներին փոխարինելու են գալիս կենցաղը, առօրյան՝ իր անխուսափելի սթրեսներով: Կենցաղն ամենամեծ փորձությունն է երիտասարդ ամուսինների համար: Միմյանց լրիվ բացահայտումն ու 'գունազրկումը' երկրորդ ծանր քննությունն է նորապսակների համար, իսկ երրորդը՝ դերերի, պարտականությունների բաշխումը: Աստիճանաբար նրբազգացությունը, քնքշությունը, հաճոյախոսությունները, երախտագիտության արտահայտությունները քչանում են՝ տեղ տալով փոխադարձ քննադատություններին: Հաճախ զուգընկերները դառնում են ավելի պակաս ուշադիր միմյանց նկատմամբ և ավելի էգոիստ, քան առաջ: Սառած զգացմունքները կարող են բազմաթիվ ընտանեկան կոնֆլիկտներ ստեղծել, ուստի սերն ամուսնության մեջ մշտապես պահպանել: Միաժամանակ պետք է հասկանալ և գիտակցել, որ մինչամուսնական, պատանեկան սերը և ամուսնական սերը նույնը չեն: Ներդաշնակ ընտանիքներում մարդիկ միշտ լսում են միմյանց հույզերն ու պահանջմունքները, նրանք բարի են, քնքուշ, հավատարիմ ու համբերատար: Նրանց հարաբերությունները հիմնված են հարգանքի, փոխադարձ օգնության, ներողամտության վրա: Երջանիկ ամուսինների կյանքում մշտապես տեղի է գտնվում ուշադրության նշանների համար, որոնք արտահայտում են ջերմություն և հոգատարություն միմյանց նկատմամբ:

Ընտանիքում հոգեբանական օբյեկտը երեխան է, ծնողները, պապի-տատիները և այլոք: Բնական է, որ բոլորի հոգեբանությունն էլ տարբեր է: Խոցելի են երեխաներն ու ծերերը, որոնց նկատմամբ հոգեբանական մոտեցումները պետք է լինեն այնպիսին, ինչպիսին երեխաները: Այդ երկու օբյեկտն էլ հոգեբանորեն շատ զգայուն են, նուրբ են: Իրենց հետ պետք է նրբորեն, քնքշորեն վերաբերվել: Ծերերը դառնում են երեխա: Մի փոքր սայթաքում իրենց նկատմամբ և առաջանում են

կոնֆլիկտներ:

Չկան իդեալական ընտանիքներ, ուստի և կոնֆլիկտներն անխուսափելի են, քանզի մարդ արարածն ի ծնե մեղքն իր ուսերին է կրում և իր զարգացման հետ մեկտեղ ձեռք է բերում, կատարում է նոր մեղքեր: Այդ իսկ առումով կոնֆլիկտները ընտանիքներում, անգամ եթե այն մոտենում է նույնիսկ ամենաամենային, անխուսափելի են: Դա բնական է այդպիսին է և այն պետք է շտկել: Կոնֆլիկտները լինում են երեխաների-ծնողների, ծնողների-ծերերերի,

երեխաների-ծերերի միջև: Օրինակներ շատ են:

(Նման հարցերի՝ ընտանիքի և հոգեբանության ամենապայծառ օրինակը Սասնա Ծռեր (Սասունցի Դավիթ)) էպոսն է:

Տան ավագներին էպոսում շեշտվում է ջոջ բառով (ավագ, մեծ):

Պատահական չէ, որ մեր տատաիկ-պապիկները ընտանիք ասելով օգտագործում էին ջան բառը (այսինքն ընտանիքի անդամ):

Մեր էպոսը Մեծ ընտանիք է, բաղկացաց չորս ճյուղերից՝ Ջոջ Միերից-Փոքր Միեր:

Նա հայ ժողովրդի Աստվածաշունչն է:

Երբ մայրիշխանությունից անցում կատարվեց դեպի հայրիշխանություն, արտադրողական ուժերի զարգացմանը, տնտեսության մեջ տղամարդու դերի ուժեղացմանը զուգընթաց առաջացան նահապետական ընտանիքներ, որոնց մասին սկզբնական մասում փոքր-ինչ խոսեցինք: Դրվեցին մենամուսնության հիմքերը, հաստատվեց տղամարդու իշխանությունը կնոջ և երեխաների վրա, որոնք ստանում են հոր ունեցվածքը ժառանգելու իրավունք և այլն: Չույգային ընտանիքից անցում կատարվեց մենամուսնական ընտանիքի: Գնալով ուժեղանում է տղամարդու իշխանությունը ընտանիքում (գրեթե մինչ օրս):

Մինչ ԽՍՀՄ-ի փլուզումը, աշխարհը ընտանիքները բաժանում էին երկու մասի.

- սովետական (խորհրդային) ընտանիք,
- կապիտալիստական ընտանիք:

Ըստ իս այդ տարանջատմանը ինչ-որ տեղ սին է (դատարկ) Է:Բայց դա ուներ իր սովետական բացատրությունը՝ առաջին հերթին փնովելու կապիտալիստական հասարակարգը:Ընտանիքը ընտանիք Է:Ի՞նչ կարևոր է,թե՛ դու ո՞ր երկրում ես ապրում:

Ակամայից հիշեցի Ավետիք Իսահակյանի <<Աբու Լալա Մահարի>> հռչակավոր պոեմը.Բանավոր տարբերակով խոսքը փոխանցվել և հասել է մեզ:Երբ Իսահակյանին քննադատում են,թե դու չարախոսել ես ընկերոջը,կնոջը,օրենքներն ու ընտանիքը,նա լսում և կակազելով պատասխանում է,թե ես քննադատել եմ կապիտալիստական աշխարհը:Այդ կերպ նա խուսափում է խորհրդային հետապնդումից(պոեմը նա գրել է 1909թ.,Ղազարապատում):

Ընտանիքը արդի,միաբևեռ աշխարհում,կարծես թե օտարվում է հասարակությունից:Վերևներում խոսեցինք ավանդական-հայկական ընտանիքի մասին:Կան շատ լավ դրական կողմեր՝ինչպիսիսն է օրինակ սերը,հարգանքը,նամուսը,ընտանեկան չգրված օրենքների վարքն ու բարքը և այլն:

Ես կողմ եմ ընտանիքի այն մոդելին,որ արդի և ավանդական տարբերակներից պետք է քաղել ոսկե միջինը՝հենվելով ավանդականի վրա,արդիականացնել ընտանիքը:Առաջին հերթին դա պետք է արվի ընտանիքի բոլոր անդամների միմյանց նկատմամբ հավասար լինելու հանգամանքով:Բոլորը ընտանեկան օրենքի առջև հավասար են:Ընտանիքի ամեն մի անդամ պետք է իմանա իր իրավունքներն ու պարտականությունները:Կարող է հարց առաջանալ,թե՞նորա-

ծինը,փոքրիկը,նախադպրոցականը,տարրական դասարանի երեխան ինչպես իմանա իր իրավունքներից ու պարտականություններից:Այ այստեղ է,որ մեզ օգնության է գալիս ճիշտ դաստիարակությունը(տարաբնույթ ձևերով):Ընտանիքում ծնված երեխայի համար,սկզբնական շրջանում իր աշխարհը իր մայրն է,այն ստնտու Էակը,որի հետ ամեն օր առնչվում է նորածինը:Գնալով երեխայի շփման շրջանակը մեծանում է և նա տարբեր իրերի,առարկաների,մարդկանց նկատմամբ ունենետում է իրեն բնորոշ

զգացողություն:Նա իր աշխարհն զգում է ընտանիքում:Երեխան ընտանիքից-ու-

սում շրջանում,սկսում է ընկալել աշխարհը:Յետո այդ բոլորը վերածվում է աշ-

խարհըմբռման:

Իհարկե ընտանիքում կոնֆլիկտները անխուսափելի են:Կոնֆլիկտներ են առաջանում ծնողների,երեխաների,ծնողի-երեխայի,երեխայի-ավագների(տատի,

պապի) և ընտանիքի մյուս անդամների միջև:Դա գալիս է ասելու,որ ընտանիքում,բոլորը չէ՛,որ ունենում են նույն բնավորությունը,առաջացած խնդիրների նկատմամբ ունեն նույն մոտեցումները,ընբռումները նույնն են և այլն:

Ընտանեկան այդ կոնֆլիկտների լուծումը պահանջում է հոգեբանական ճիշտ լուծում՝դաստիարակության փոխկապակցած ձևերով:Դաստիարակությունը երևան է եկել մարդկային հասարակության ծագման պահից և գոյություն կունենա,քանի դեռ գոյություն ունի հասարակությունը:

Տոհմական համայնքում,ինչպես նաև մյուս բոլոր ֆորմացիաներում,ընտանիքի առանձնացումից հետո,երեխաները սկզբնական դաստիարակությունն ստանում են ընտանիքում:Ընտանիքում է,որ երեխան ստանում է որոշակի գծերի և որակների ձևավորում:

Տեղին է մեջ բերել Խրիմյան Յայրիկի հետևյալ խոսքը.<<Ժողովուրդը եթե առաջադիմում է,ապա իր առաջին քայլերն անում է ընտանեկան սրահից,եթե լու-

սավորվում է,իր լույսն ընտանեկան ճրագից է,եթե հզորանում է,իր ուժն ու բազուկը ընտանիքից է,եթե հարստանում է,իր գանձարանն ու գանձապետն ընտանիքն է...>>:Ամփոփ ձևով տրված է ընտանիքի գնահատականը:

Շարունակենք մեջ բերել Մեծն հայի խոսքը.

<<Տուևը և ընտանիքը մի փոքրիկ թագավորության երկիրն ու սահմանն են,որի նահապետական աթոռին նստում են ծնեղները:Յայրն իբրև թագավոր և մայրն իբրև թագուհի կառավարում են ընտանիքը:Սուլյն ընտանեկան պալատի և թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա,ո՛չ սուտ,ո՛չ բռնություն,ո՛չ գավասան,այլ այդ բոլորի տեղ հայրական սերն ու մայրական գորովն է:Դաստիարակությունն ու խրատը ծնողների կենդանի օրինակն է...>>:Խոսքեր,որ ասել է Մեծն հայորդին շուրջ 130-140 տարի առաջ,արդիական են և չեն կորցրել իրենց հմայքն ու իմաս-

տությունը:

Ընտանիքը հայերեն անվանել են նաև 'ճուխ:Դա գալիս է հայկական ավանդական բնակարանների երդիկից դուրս եկող թոնրի ծխից:Եթե երդիկից ծուխ է դուրս գալիս,նշանակում է այդ տանը մարդ է բնակվում և կյանքն իր ընթացքի մեջ:

Յետաքրքիր է,որ այս առումով գյուղը կամ բնակավայրը դիտվել է որպես մի ընդհանուր ծուխ,այսինքն ընտանիք:Պատահական չէ,որ համայնքի հոգևոր հովվին ծխական քահանա են անվանել:

Ակամայց հիշեցի Մեծն Ջիվանուն.

Մարդ կա գերդաստանը պահում է ցամաք,

Կերթա,դուրսը կուտե մեղր ու սեր,կարագ,

Այլոց համար կանե ձայնով պատարագ,

Իրան ժամ չի անիլ,խելքի՛աշեցեք:

Մի նոր քաղաք տեսա ժամի սիրահար.

Բնակիչները հայ,մետ քսան հազար,

Իրանք սնունդ չունին ապրելու համար,

Յինգ հատ վանք են շինել ,խելքի՛աշեցեք:

(Առանց մեկնաբանությունների):

Արդարացիորեն պետք է նշել,որ ընտանիքի հարատևման ու ամրության գործում

մեծ դեր է խաղացել Հայ Առաքելական Եկեղեցին: Չպե՛տք է դա
ուրանալ, անա-

կախ նրանից, թե դու ինչ դավանանքի մարդ ես: Երբ երկար դարեր
չունենալով պետություն (պետականություն), ազգապահպանման
խնդիրը լուծել են հավատքի և ընտանքի ամրության պահպանման
միջոցով: Դա անժխտելի փաստ է:

Չրկված լինելով պետականությունից, հայոց եկեղեցին գերազանց է
հասկացել հայկական ընտանիքի կարևորությունը և միշտ իր հովանու
ներքո է պահել հայկական ընտանիքների գոյության, ամրապնդման և
հարատևության խնդիրը:

Այդ առումով տեղին է նշել Սփյուռքում հայկական ընտանիքների
գոյության, բնա-

կավայրի, անդամների մասին տեղեկատվության մասին, որը
պահպանվում է տեղի

գործող հայկական եկեղեցիներում:

Հենց այնպես չէ՛, որ Հայ եկեղեցում իրականացվում է նորաստեղծ
ընտանիքների Սուրբ պսակի ավանդական արարողությունը, որը
եկեղեցու յոթ խորհուրդներից մեկն է.

- Ս.Մկրտություն
- Ս.Դրոշմ
- Ապաշխարհություն
- Ս.Հաղորդություն
- Պսակ կամ Ամուսնություն
- Ձեռնադրություն
- Կարգ հիվանդաց:

Պսակը և ամուսնությունը մաքուր կյանքի, ընտանեկան
հավատարմության և ընտանիքի սրբության խորհրդանիշն
է: Ընտանիքը մեզ համար, ինչպես ազգը, հայրենիքը, ունի բացառիկ
արժեք: Դարեր շարունակ բազմակնության

արգելումը, անհավատարմության արգելումն ու դատապարտումը ընտանիքում սիրո և համերաշխության գրավականն են: Ընտանիքի կազմավորումը տանում է

արարչագործության: Սիրո հիմքի վրա արարչագործության արդյունքը՝ երեխան է:

Քրիստոնեությունն ընտանիքի հիմքը համարում է աստվածային Սերը:

Ընտանիքում դաստիարակության գործընթացում երեխան սովորում է մայրենի լեզուն, ազգային նիստ ու կացը, երգն ու պարը, ավագների նկատմամբ հարգանքը, և բազմաթիվ այլ կարևոր բաներ: Այդ բոլորը լինելով ազգային մշակույթի բաղկացուցիչ մաս, փոխանցելության սկզբունքով անցնում են սերնդեսերունդ:

ԿՈՆՖԼԻԿՏԵՐ

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, եթե չկան վեճեր նշանակում է ընտանիքում տիրում է սառը պաշտոնական հարաբերություններ:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են քրեածին, կոնֆլիկտածին, ամբարենպաստ ընտանքիներ:

Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք:

Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը:

Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է:

Սկսած ֆիզիկական, կենսաբանական, ֆիզիոլոգիական և մինչև հոգևոր պահանջմունքները:

Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել պատկերացումների 3 համակարգ՝

- 1. Էգոցենտրիկ համակարգ - որի հիմքում ընկած է սեփական Ես-ը, այլ մարդիկ կամ առարկաները հանդես են գալիս որպես կամ օգտակար գործիք կամ խոչընդոտ:**
- 2. Այլէտորոցենտրիկ համակարգ - կենտրոնում ընկած է ուրիշը:**
- 3. Սոցիոցենտրիկ - հիմքում ըմկած է մեկը:**

Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

- 1. Միմյանց հարմարվելու փուլ՝ ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձեվավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:**
- 2. Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի), կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:**
- 3. Բախման փուլ՝ երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:**
- 4. Միապաղաղության, կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ, կամ քաղցի շրջան:**
- 5. Իվոլյուցիոն, կամ միայնակության զգացման փուլ: Այս շրջանը համարվում է 18-ից 24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլյուցիոն շրջանի հետ: Կարող է ձեւավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս**

փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսեւորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսեւորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը: Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով:

Եզրակացություն

Չայոց մեջ ընտանիքն ունի առանցքային արժեք: Եթե ազգն առաջադիմում է, հզորանում է, հարստանում է, գոյապայքար է մղում, ապրում ու ստեղծագործում է այս անօրեն աշխարհում, այդ բոլորը գալիս է ընտանիքից: Կորուսյալ մեր հայրենիքը, ավանդական մեր ընտանիքը, ավելացրած արդիական տարրերը, իր Տիրոջ կարիքը շատ ունի: Կամոք Աստծո, միաբանությամբ ազգի, շնորհիվ ընտանիքի, տիրանանք Ավետյաց Երկրին:

Ընտանիքի կազմավորումը ամուսինների կողմից սիրո և խոհեմության վրա հիմնված այնպիսի մի քայլ է, որի արդյունքն արարչագործությունն է: Ընտանիքի դերը հաստատական կյանքում ժողովրդագրական տեսանկյունից ազգի վերարատադրության խնդիրն է:

Ընտանիքի մյուս դերը դաստիարակությունն է: Ընտանիքում դաստիարակության գործընթացում երեխան սովորում է մայրենի լեզուն, ազգային նիստ ու կացը, երգն ու պարը, ազգի պատմությունը, հայրենասիրությունը,

պայքարելու և հաղթելու ունակություն և այլ կարևոր բացարձակ արժեքներ:

Ընտանիքի դերն արժևորվում է ազգայի արժեքների և մշակույթի պահպանման և վերարտադրության տեսանկյունից:

Ընտանիքի հիմքը համարվում է “Սերը”:

Գրականության

1. Աստվածաշունչ մատյան

2. Հայկական Սովետական Հանրագիտարան - հատոր 3,4

3. Հայոց Եկեղեցու պատմություն

4. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն:

Պրոֆեսոր Ա.Վ. Պետրովսկի, թարգմանիչ՝ Ա.Ա.

Նալչաջյան

5. Ընդհանուր հոգեբանություն Նալչաջյանի խմբագրությամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տիրուցաթերթ-Էջ 1

2. Նպատակը-Էջ 2

3. Ներածություն-Էջ 2-5

4. Ընտանիքի հոգեբանություն-Էջ 6-17

5. Կոնֆլիկտներ-Էջ 17-19

6. Եզրակացություն-Էջ 19-20

7. Գրականություն-Էջ 20